ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

News.am կայքի՝ 2021թ. փետրվարի 11-ի «Ի՞նչ են ասում Փաշինյանի պարտված հովանավորյալները» վերնագրով նյութի կապակցությամբ Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» ծրագրի քաղաքական մեկնաբան Լևոն Սարդարյանի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

News.am կայքը՝ 2021թ. փետրվարի 11-ին վերահրապարակված «Старше Эдды» տելեգրամ ալիքի «Ի՞նչ են ասում Փաշինյանի պարտված հովանավորյալները» վերնագրով նյութի վերաբերյալ (հրապարակումը ներկայացվում է թարգմանաբար՝ «Старше Эдды» տելեգրամ ալիքից):

Դիմումատուն ԴՄ-ից ակնկալում է վերոնշյալ հրապարակումը դիտարկել մասնագիտական էթիկայի տեսանկյունից և իրականացնել աշխատակարգով սահմանված գործողություններ:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. News.am կայքը 2021թ. փետրվարի 11-ին հրապարակել է «Старше Эдды». Ի՞նչ են ասում Փաշինյանի պարտված հովանավորյալները» վերնագրով նյութը, որում կայքը, որոշակի կրճատումով թարգմանաբար ներկայացրել է «Старше Эдды» տելեգրամ ալիքի հոդվածը:

Հրապարակմանը նախորդում է փոքր նախաբան, որտեղ այն ներկայացվում է որպես «Старше Эдды» տելեգրամ ալիքի հեղինակ

Գերման Կուլիկովսկու դատողություններն այն մասին, «թե ինչ հարթակ են պատրաստում Փաշինյանի պարտված կողմնակիցները»։ Հոդվածում մեջբերվում են Լ. Սարդարյանի ֆեյսբուքյան գրառումները և դրանց վրա հիմնվելով՝ կատարվում են որոշակի եզրահանգումներ ու համեմատություններ։ Նախաբանում ներկայացված չէ News.am-ի վերաբերմունքը հրապարակվող տեղեկություններին, ինչպես նաև չկա հիշատակում, թե արդյո՞ք խմբագրությունը փորձ է կատարել ճշտելու դրանք։

2. 2021թ. փետրվարի 17-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն ստացել է Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» ծրագրի քաղաքական մեկնաբան Լևոն Սարդարյանի դիմումը։ Դիմումատուն կարծում է, որ վերոնշյալ հրապարակման մեջ թույլ են տրվել լրագրողական ու գործընկերային էթիկայի մի շարք խախտումներ, մասնավորապես, այն պարունակում է թե՛ ատելության խոսք, թե՛ չճշտված տեղեկատվություն։

3. 2021թ. մարտի 3-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը դիմեց Լ. Սարդարյանին՝ ճշտելու՝ արդյո՞ք հրապարակման մեջ աղավաղվել են իր ֆեյսբուքյան գրառումները, կամ էլ դրանք պատշաճ չեն մեջբերվել։ Դիմումատուն հայտնեց, որ դրանք չեն աղավաղվել, սակայն կտրվել են ժամանակային և իրադարձային համատեքստից, ինչպես նաև, որ դրանում առկա՝ իրականությանը չհամապատասանող տեղեկությունը հրապարակելիս լրատվամիջոցը այն չի ճշտել իրենից։

4. Լևոն Սարդարյանը խնդրում է մասնագիտական էթիկայի տեսանկյունից դիտարկել վերոնշյալ հրապարակումը։

5. 2021թ. մարտի 2-16-ը ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն անցկացրեց դիմումի առցանց քննարկումներ։

Բ. ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք**

Հոդված 8. Հերքման և պատասխանի իրավունքը

1. Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը։

Հոդված 9. Լրատվական գործունեություն իրականացնողի պատասխանատվությունը

2. Լրատվական գործունեություն իրականացնողն ազատվում է տվյալ տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից, եթե դա՝

3) հրապարակային ելույթի, պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն է, և դա տարածելիս ինքը կատարել է հղում այդ աղբյուրին:

II. **ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք**

Հոդված 1087.1. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները

9. Եթե վիրավորելիս կամ զրպարտելիս հղում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվական գործունեություն իրականացնողը:

III. **Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր**

1.1. մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,

1.3. հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից,

1.4. վերլուծություններ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի հավաստի տեղեկությունների վրա,

3.5. սահմանել սոցիալական ցանցերում խմբագրության

աշխատակիցների վարքի կանոնները և հետևել դրանց պահպանմանը,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, և պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում:

IV. **Սոցիալական ցանցերում խմբագրությունների աշխատակիցների վարքի կանոնների վերաբերյալ ուղեցույց**

1. Վստահելիություն

Սոցիալական ցանցերում լսարանի հետ ավելի անմիջական և մտերմիկ շփվելու դեպքում էլ չպետք է մոռանալ, որ պետք է պահպանել լրատվամիջոցի հեղինակությունը: Սոցիալական ցանցում տարածած ամեն հղում կամ գրած ամեն մեկնաբանություն հանրային տեղեկություն է՝ անկախ նրանից, թե դիտելիության ինչ կարգի սահմափակումներ են դրվել:

Լրատվամիջոցի ներկայացուցչին խորհուրդ չի տրվում սոցցանցերում տարածել հայտարարություն կամ կատարել գրառումներ, որոնք կարող են ընկալվել որպես քաղաքական հայացքների, ռասայական, սեռական, կրոնական կամ այլ հիմքով խտրականության դրսևորում:

(…)

Եթե ցանցում կատարված որևէ գրառում կարող է կասկածի տակ դնել մասնագիտական օբյեկտիվությունն ու բարեխղճությունը, ապա ավելի լավ է ձեռնպահ մնալ այն հրապարակելուց:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

քննարկելով

News.am կայքի հրապարակման վերաբերյալ՝ Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» ծրագրի քաղաքական մեկնաբան Լևոն Սարդարյանի դիմումը,

ընդունելով հանդերձ, որ

հրապարակումը թարգմանություն է «Старше Эдды» տելեգրամ ալիքից,

արձանագրում է.

1. 2021թ. փետրվարի 11-ին, «Старше Эдды». Ի՞նչ են ասում Փաշինյանի պարտված հովանավորյալները» վերնագրով նյութի մեջ News.am-ը, հղում կատարելով տելեգրամ ալիքին և թարգմանաբար ներկայացնելով հրապարակումը, առանց ճշտումների փոխանցել է անհիմն կամ ոչ հավաստի տեղեկություններ այն մասին, որ Լ. Սարդարյանը Ն. Փաշինյանի մտերիմն է, ինչպես նաև հանդիսանում է հանրային հեռուստաընկերության «Լուրերի» գլխավոր խմբագիրը: Այդ անճշտությունները տվյալ դեպքում էական են, քանի որ դրանցից բխեցվում են վարկաբեկող հետևություններ:

Թեպետ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, ինչպես նաև Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 9-րդ մասի համաձայն, լրատվամիջոցը արտատպման և հղման դեպքում ազատվում է պատասխանատվությունից, այսուհանդերձ, News.am-ի խմբագրակազմը, լրագրողական բարեխղճություն դրսևորելու դեպքում, կարող էր ճշտել և ծանոթագրությամբ տեղեկացնել «Старше Эдды» տելեգրամ ալիքի անճշտությունների մասին, մանավանդ, որպես հայաստանյան լրատվամիջոց, այն շատ ավելի տեղյակ պետք է լիներ տեղի իրողություններից:

2. News.am-ի խմբագրությունը, վերահրապակելով հոդվածի ոչ կոռեկտ՝ Էնվեր փաշայի հետ համեմատությունը, ակնհայտ վիրավորանք է հասցրել Սարդարյանին, քանի որ նման համեմատությամբ անձը հանրային ընկալումներում միանշանակ ասոցացվում է Հայոց Ցեղասպանության հեղինակ, իրագործող և ռասիստ լինելու հետ: Այնինչ, Սարդարյանի գրառումները ռասիզմի տարրեր չեն պարունակում և նման համեմատության հիմք չեն տալիս:

3. Խմբագրությունը, վերահրապարակելով հոդվածում Լևոն Սարդարյանի մասնագիտական գործունեության հետ առնչություն չունեցող, մասնավոր գրառման հիման վրա կատարված, հեռուն գնացող քաղաքական եզրակացությունները (ընդ որում չստուգելով տեղեկությունները և դրանց վերաբերյալ չներկայացնելով սեփական ճշտող մեկնաբանությունները), փաստորեն, կասկածի տակ է դնում սոցիալական ցանցերում անձի ազատ արտահայտվելու իրավունքը:

4. Այսպիսով, News.am-ի կողմից խնդրո առարկա հոդվածի վերահրապարակման փաստը հիմքեր է տալիս արձանագրելու

լրագրողական էթիկայի մի քանի կանոնների խախտումներ, մասնավորապես, չճշտված և որպես որոշակի միտումներ պարունակող ընկալվելու առիթ տվող տեղեկությունները և դրանց վրա կատարված եզրակացությունները տարածվել են առանց նախապես ստուգվելու, փաստերը, վարկածները, կարծիքները և մեկնաբանությունները ներկայացվել են առանց հստակ տարանջատման, ինչպես նաև անձին անհիմն վիրավորանք է հասցվել:

5. Միևնույն ժամանակ, Լևոն Սարդարյանը, որպես Հանրային հեռուստատեսության քաղաքական մեկնաբան, պետք է գիտակցեր, որ սոցիալական ցանցերում իր գրառումները կարող են ընկալվել ոչ թե որպես սուբյեկտիվ կարծիք, այլ Հանրային հեռուստաընկերության դիրքորոշում՝ դրանով իսկ կասկածի տակ դնելով այդ հեռուստաընկերության համար ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված անաչառության և անկողմնակալության սկզբունքների պահպանումը: Այս հանգամանքին կարևորություն տալը կարող է նվազեցնել օտարերկրյա լրատվամիջոցներում մանիպուլատիվ բնույթի այնպիսի հրապարակումների տարածումը, ինչպիսին է խնդրո առարկա հոդվածը:

6. Ցանկալի է, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը մշակի սոցիալական ցանցերում իր ներկայացուցիչների վարքի կանոնները և հետևի դրանց պահպանմանը, քանի որ այդ վարքը կարող է ազդել ինչպես խմբագրության աշխատակցի, այնպես էլ լրատվամիջոցի նկատմամբ հանրային վստահության վրա:

ՔԱՆԻ ՈՐ News.am-ը ինքնակարգավորման նախաձեռնության անդամ չէ և պարտավոր չէ հրապարակել սույն փորձագիտական կարծիքը, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հորդորում է դիմումի հեղինակին՝ օգտվել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ պատասխանի հրապարակման իր իրավունքից: ԴՄ-ն լրատվամիջոցին կոչ է անում տարածել սույն կարծիքը՝ դրանով իսկ նպաստելով պատասխանատու լրագրության սկզբունքների պահպանությանը:

Ընդունվել է 2021թ. մարտի 16-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության

կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 61-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007թ. մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015թ. մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: